

ԳՐԱՆՈՍՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԲԵՐԱԼՈՒԳՐԱՅԻՄ

ՄԵԾԱՐԺԵՔ ԳՈՐԾ<sup>1</sup>

Հայկական ՍՍՌԻ Գիտությունների ակադեմիայի Մ. Արևիկյանի անվան Գրականության ինստիտուտը լույս է ընծայել Ա. Ղանալանյանի «Հայկական առածանի» աշխատությունը, որ պարունակում է տեքստը և հետազոտությունը ժողովրդական առածների և ասացվածքների:

Սա առաջին գիտական համահավաք հրատարակությունն է հայկական առածների և ասացվածքների Պետք է ասել, որ նախատեսությունը բազմամյա շրջանը կուտակել է առավելագույն հում նյութը: Բազմաթիվ մարդիկ, ավելի կամ պակաս հմուտ և տարբեր հաջողությամբ դրի են առել առածներ ու ասացվածքներ: Բայց ինչպես ողջ ժողովրդական բանահյուսության մնացյալ բազմահարուստ նյութերը՝ Լյուսյ, հերիաթը, բալլադներն ու այլ ավանդությունները չեն ուսումնասիրված շատ սակավ օացառություններ, նույնպես և առածները՝ ասացվածքների հետ:

Միաժամանակ պետք է նշել, որ սա նաև առաջին գիտական ուսումնասիրության փորձն է ժողովրդագրական այնպիսի մի հետազոտության՝ ինչպիսիք առածն է: Առածներն ու ասացվածքները ցրված են բազմաթիվ հրատարակությունների մեջ: Իսկ թե սպառած է նյութը, իհարկե չի կարելի: Այդ հավաքման պրոցեսը միառժամանակ դադարեց: Եվ այնպիսի մի ժամանակաշրջանում, երբ մոռացվում են շատ առածներ ու ասացվածքներ, իսկ բարբառները տեղի են տալիս դրական լեզվի առաջ, դործածությունից դուրս ընկնում: Համապատասխանելով ժամանակի պահանջին՝ շատ տեղին էր արդեն սկսել այս ուսումնասիրությունը, անկախ այն հանգամանքից, որ մեր հին բանահավաքները կիսատ թողին գործը և շատ բան արդեն անհետ կորել է:

Այդ նյութերի ուսումնասիրությունը, որ պահանջում է կարգի բերել, զտել, դասավորել, սխտեմավորել և տալ նրանց մեկնաբանու-

թյունն ամենակատարյալ ուսմունքի՝ մարքսիզմ-լենինիզմի լույսի տակ, միակ երջանիկ առիթն էր և ժամանակը՝ ձեռնարկել:

Եվ ահա Ա. Ղանալանյանը օտն է դրել իրագործել այդ պահանջը:

Նախ՝ տեքստին կցել է մի ընդարձակ «նկարագրություն»՝ նվիրված ժողովրդական առածների և ասացվածքների ընդհանուր բնութագրին և հայկական առածների ու ասացվածքների բազմակողմանի հետազոտությանը:

Ապա տվել է մի «Առաջաբան», որ շարադրված է հայկական առածների ու ասացվածքների գրառման, հրատարակման և ուսումնասիրման համառոտ պատմությունը և հանգամանորեն բացատրված են ներկա հրատարակության առանձնահատկությունները:

Եվ վերջապես՝ «Թեմատիկ ցանկ», որ ըստ առանձին բաժինների՝ հաջորդական կարգով նշված են յուրաքանչյուր բաժնում ընդգրկված համապատասխան թեմաների վերնագրերը, որով կարելի է ժողովածուի մեջ հետազոտությամբ գտնել այս կամ այն առածը:

«Առածների ժողովածուն» ունի նաև օտար և դժվար հասկանալի բառերի բացատրություններ:

Ընդհանուր տպավորությունը, որ ընթերցողը կստանա այս աշխատության մեջ՝ դա այն ջանքն է, որ հեղինակը գործ է դնում՝ վեր հանել առածի և ասացվածքի համապարփակ և մեծանշանակ պոտենցիալը: Դա շատ կարևոր էր այն պատճառով, որ մինչդեռ ժողովրդական բանահյուսության այլ ձևերը՝ երիաթը, վեպը, երգը, բալլադը՝ միշտ ավելի են հատուկ ուշադրության արժանացել իրենց ներքին արժեքից բացի, նաև շնորհիվ ծավալի և սյուժեի՝ առածն ու ասացվածքը անգամ չի նկատվում հանդերձ շատ մասսայական և տարածված ստեղծագործություններ՝ իրենց լակոնիկ արտահայտության և փոքրիկ ձևի պատճառով ավելի նվազ ուշադրության են արժանացել:

Ինչ խոսք, որ առածի տեսակարար կշիռը շատ է մեծ, որի մասին կարելի է շատ ընդարձակվել: Եվ եթե գրքի հեղինակը մեկից ավելի անգամներ կրկնում է առածի և ասացվածքի

<sup>1</sup> Ա. Ղանալանյան — հայկական առածանի: Հրատարակություն հայկական ՍՍՌԻ Գիտությունների ակադեմիայի, Երևան, 1951 թ.:



մասին իբրև կարճ ձևակերպությունների մասին, որոնց բովանդակությունը մտքերի, դատողությունների ամբողջ աշխարհ է՝ բացի այն, որ տեղին է, այս ցույց է տալիս նրա լուրջ վերաբերմունքը դեպի իր մոնոգրաֆիկ նյութը:

Ընկ. Ղանալանյանը առածն ու ասացվածքը զիտում է իր պատմական, սոցիալ-տնտեսական, դասակարգային, փիլիսոփայական ասպեկտով:

Ամենագլխավոր և հիմնական բնորոշումն այն է, որ առածն ու ասացվածքն ըստ էության ժողովրդական ստեղծագործությունն են, ժողովրդին հատուկ ձև, ժողովրդի սեփականություն, և անգամ այն առածներն ու ասացվածքները, որ կարծվում են ոչ ժողովրդի ստեղծագործություններ՝ մեծ մասամբ իրոք ժողովրդական են, որքան էլ նրանց մեջ ըստ երևույթին դրված են թվում «հակաժողովրդական» իդեաներ: Նման նյութերին պետք է զգույշ մոտենալ, բանի որ դրանց մեջ թաքնված է լինում հաճախ ժողովրդի շատ նուրբ իրոնիան կամ դառն ինքնածաղրը: Հայտնի է «Քաջ Նազար» հեքիաթը, ուր ժողովուրդը դառնորեն իրեն է ուղղում ծաղրը՝ ինքնաքննադատության, ինքնամտրակման նպատակով, և այդ ծաղրի մեջ զգացնում է իր սթափ և իրականությունը ճիշտ զնահատող սուր միտքը:

Եվ ապա՝ ժողովրդի հիմնական բարոյական և մտավոր հատկություններին բոլորովին խորթ է տիրող դասակարգերի իդեոլոգիան: Նա դյուրությամբ դուրս է գցում իր գործածությունից նման արտահայտությունները: Բնական է, որ առածների և ասացվածքների համարյա ողջ նյութը պատկանում է ժողովրդին: Դրան ապացույց նաև առածների ու ասացվածքների բացհիքաց արտահայտված իմաստը, որով ժողովուրդը անվախորեն, ազատ արտահայտվում է: Եվ ժողովրդական ողջ բանահյուսության անզնահատելի արժեքն էլ հենց այն է, որ դրանց մեջ նա ամենևին չի ենթարկվում տիրող դասակարգերին, չի ստրկանում հոգեպես, պահպանում է իր ողջ խարակտերը, ճշմարտախոսությունը, բնադատական միտքը, կարծես իրեն ճնշող դասակարգ չի եղել կամ կա, բայց հաշվի մեջ չէ: Ժողովուրդը առածի և ասացվածքի մեջ իրեն զգում է ռիտանքով:

Ընկ. Ղանալանյանը առածը համարում է կրկական ժանրին պատկանող ժողովրդական ստեղծագործություն: Դա ճիշտ է, բայց մասնակի: Կրկական ժանրը պահանջում է պատում, սյուժե և արտաբերիչ աշխարհի պատկերացում: Ծիշտ է նկատում հեղինակը, որ առածը որևէ զրույցի սեզրակացություն-վերջաբանն է, որ անջատվելով բուն զրույցից ապրում է:

Իբրև առած կամ ասացվածք, որով և մնում է իբրև որևէ բեկոր ամբողջ կառուցվածքից: Այստեղ ծավալի մեծ ու փոքրի հարց չկա և ճիշտ է, որ առածները երբեմն մի որևէ զրույցի տպավորություն են թողնում: Բայց առածները երբեմն արտահայտում են մի որևէ ապրում, հուզում և անհատական լիրիկական տարր են պարունակում: «Ի՞նչ անեմ ոսկե լագանը, որ մեջը պիտի արյուն թրեմ» առածը պարունակում է ավելի անհատական ապրումի բան մի որևէ պատումի, զրույցի տարր: Պատկերավորումը, ոճական այլաբանությունը, համեմատությունը կարող են ձևավորել մի որևէ անկախ, անհատական միտք, ապրում:

Ընկ. Ղանալանյանը առածի և ասացվածքի առաջին աղբյուրը գտնելով կրկական ժանրին պատկանող ստեղծագործությունների մեջ՝ նշում է նաև կենդանական զրույցները, որոնցից և համարում է որոշ առածների և ասացվածքների ծագումը: Այս ծագումը ճիշտ է՝ որոշ շափով և բոլորովին այլ կապակցությամբ: Ծիշտ է՝ արտադրական միջոցների զարգացման և մարդկանց տնտեսական-հասարակական պայմանների փոփոխման հետևանքով բայցայլում է տոտեմական շրջանի հին աշխարհը՝ բրոնզում, ճիշտ է, որ տոտեմական շրջանի զրույցների ուղղակի իմաստը փոխվում է այլաբանականի, ինչպես բացատրում է հեղինակը, սակայն այլաբանական իմաստ է ստանում ոչ տոտեմական շրջանի կենդանական զրույցը ինքը, այլ զրույցի բեկորը, որը դառնում է նոր զրույցի այլ տիպի տարր՝ նոր զրույց, որ ամբողջովին այլաբանական է, այսինքն գիտակցվում է որպես պայմանականություն, ոչ որպես իրողություն, ինչպես որ էր հնադարյան մարդու պատկերացումով:

Այս և նման բացատրություններում ստեղծվում են վարանոտ, ոչ հաստատուն հետևություններ ու եզրակացություններ: Առանց իշի գլխի հարսանիք չի լինի» առածը մեզ թվում է ծաղրական այլաբանություն է, առանց այլևայլության, մինչդեռ հեղինակը համարում է տոտեմական շրջանի կենցաղային սովորույթներից հեղուկ և նոր հասարակական պայմաններում վերաիմաստավորված ու այլաբանական նշանակություն ստացած ստեղծագործություն: Վերաիմաստավորումն ու այլաբանումը չի կարելի համարել ձևական բան: Անիմիստական տոտեմական շրջանի նախամարդը կենդանական և այլ անձնավորած առարկաների ու հրեվույթների մասին խոսում էր իբրև իրողությունների մասին: Այստեղ մտքի խաղ չկար: Դա ուղղակի իմաստ էր պարունակում իր մեջ, ինչպես ռուսերը վազում է, բամին փշում է. ամպը դուռում է:



Այլարանությունը ստեղծագործություն է գիտակցված պայմանականությամբ և նրա ատաղձը՝ կենդանին, լեռը, կայծակը՝ այլաբանող ժողովրդի գիտակցության մեջ իրական են, իսկ հրեականության «խաղի» մեջ պայմանական:

Ընչպիսի տոտեմական շրջանի մարդը իր զրույցում չէր այլաբանի, այնպես էլ արտադրական միջոցների զարգացման ավելի բարձր աստիճանի վրա գտնվող մարդը չէր կարող այդ շրջանը պատմել ուղղակի մտքով: Ե՛վ ջրի վազելը, և՛ բամու փչելը, և՛ ամպի գոռալը, ոչ հետ-տոտեմական, հետ-անիմիստական շրջանի և ոչ էլ այժմյան նորագույն շրջանի համար իսկական իմաստ չի այլևս, ինչպես և այլաբանություն էլ չի, այլ «բարացած» և իր անիմիստական կերպարը կորցրած, այժմեական պարզ լեզու, ջուրը հոսում է:

Այսպիսով պետք է խիստ սահմանազատվել առածի և ասացվածքի իսկական և այլաբանական իմաստները որոշելիս, ընդունել, որ երբեմն կա նորի կապը հնի հետ, բայց նախ՝ ոչ միշտ, և որ գլխավորն է՝ նորի որակը վճռական արժեքավորումն է ստանում շնորհիվ իր պայմանականության, այլաբանականության, այսինքն՝ ստեղծագործության:

Այսպես, օրինակ՝ հեղինակը տալիս է փաստեր, որոնք հաստատելով մի կողմից հայ ժողովրդական առածների ու ասացվածքների իրավոր շատ հնությունը, մյուս կողմից շոշափում են վերոհիշյալ էթնոգրաֆիական խնդիրը: Անշուշտ պատկառելի Շարայի և մեր թվականությունից առաջ 4-րդ կամ 5-րդ դարում առաջացած Շիրակ տեղանվան կապակցությամբ է հորինված այն ասացվածքը, որ 5-րդ դարու նորենացին մեջ է բերում, «Թէ քո Շարայի որկորն է, ասեն, մեր Շիրակա ամբարքն չեն»: (Չգիտենք ինչու ուսումնասիրողը չի հիշատակում նորենացու և մյուս պատմագիրների հին առածները, որոնք րիչ չեն):

Հեղինակը սխտեմատիկ կարգով պրպտում և նշում է հայ ժողովրդի առածների ու ասացվածքների կապը ամենահնագույն շրջաններից մինչև նորը, որով և նա առածն ու ասացվածքը տալիս է պատմականության ասպեկտի մեջ:

Առածների ու ասացվածքների պատմականությունը հաստատելու համար հեղինակը էքսպերտ է կատարում հայ ժողովրդի պատմական հետազոտողների, որոշելու համար նրանց ստեղծագործման պատմական-իրական հողը:

Նման ժողովածուները և հենց այս ժողովածուն հնարավորություն են տալիս դիտելու և ճանաչելու ժողովրդի նման մի տեղական կոլեկտիվի ողջ կյանքը ծագումից մինչև նոր շրջանները:

Այսպիսով, համառոտ կանգ առնելով հայկական առածների ստեղծման ժամանակի հարցի վրա, հեղինակը անցնում է այն առածներին, որոնք հայ ժողովրդի բաղաբական կյանքի, հոգեկան նկարագրի և միջավայրի արտացոլում են ներկայացնում:

Ժողովածուի մեջ տեղավորված բազմաթիվ առածներն ու ասացվածքները հայ ժողովրդի բնութագրերն են, որ հավաքական կերպարով մեր առջև պարզում են հայ ժողովուրդը իր ամբողջ վեհությունը և խրատականությամբ: Սա մի կյանքի դպրոց է, ուր կարելի է գնահատել մի ամբողջ ժողովրդի կենսափորձի արժեքը:

Եթե մի րոպե մեր ուշադրությունը հեռացնենք հավաքածուի բազմերանգ նյութաներից, մարդկային բնությանը հատուկ հազար ու մի մրտքերի, զգացմունքների, դատողությունների արգասիքներից և վերցնենք տվյալ նյութը իր խոշոր գծերով, այն, որ կազմում է մի ժողովրդի իսկական էությունը, նրա դեմքը, նրա ֆիզիոնոմիան «խոշոր պլանում» — ապա այս ժողովածուով հեղինակը հասնում է իր մեծ նպատակին:

Այստեղ հեղինակն իր ընդարձակ և մեծարժեք նյութով վեր է հանում հայ ժողովրդի կուլտուր-պատմական և ճանաչողական առանձնահատուկ արժեքները: Հեղինակը նաև արդարացիորեն առանձնացնում է առածների և ասացվածքների մի այնպիսի խմբավորում, որի մեջ արտացոլում է հայ ժողովրդի պատմության առանձնահատկությունները:

Այստեղ հանդես է գալիս հայ պատմության կենտրոնական հերոսը՝ հայ ժողովուրդը: Նրա ազգային կուլտուրայի դեմոկրատական մասի ներկայացուցիչը, աշխատավորությունը: Հայ ժողովրդի պատմության սպեցիֆիկ կողմն այն է եղել, որ նա ավելի երկար դարեր, քան շատ ժողովուրդներ ապրել է անպետական վիճակում, օտար բռնակալությունների տակ, ենթարկվել է սարսափելի կոտորածների, ավերածությունների, կողոպուտի, ճնշումների: Բռնակալները փոխարինել են բռնակալներին. ռուսաց, Մուսան եկավ, Շեխը գնաց, Մահմադն եկավ: Բռնակալների հետ փոխվել են զանազան շրջաններ. պարսիկների, մոնղոլների, թաթարների, թյուրքերի... Քանակը դառել է որակ:

Օտար բռնակալության լուծը հայ ժողովրդի համար եղել է թե՛ բաղաբական և թե՛ սոցիալական լուծ, և դրա արտահայտությունները չեն պակասում նրա առածների և ասացվածքների մեջ: «Ձորքան» եղել է ինչպես հայրենի, հույն-պես և օտար: «Միասնական և դասակարգերի շրթանված», «մի հոսանքի» ժողովրդական մասսաների մասին հակագիտական և հակապատմական կոնցեպցիան հիանալի կերպով



հերքում է այս թեկուզ շատ փոքրիկ, բայց նշանակալից ասացվածքը:

Ուշագրավն այն է, որ սոցիալական անհավասարության և հարստահարության պայմաններում հայ ժողովրդի միտքը շատ պայծառ է եղել և գիտակից: Նա մինչև անգամ կարողանում է ծաղրի հասցնել գործը և չկորցնել հումորը, — «Ուղտին ասին՝ թագավորը բեղ կանչել ա, աչքդ լի՛սա: Ասաց այս Շարուր բրնձի պիտի ղրկի, յա Կողբ աղիս:

Հայաստանի ֆեոդալական տնտեսաձևին հատուկ շահագործման հիմնական ձևերից մեկը՝ կոռը՝ թողել է իր հետքը. «Կոռվորը ձմեռը թոփ կենին» ասացվածքը:

Այնուհետև հայ ժողովրդի սոցիալ-բարոյական պայմանների ծնունդը՝ պանդխտությունը՝ նույնպես «հայկական թեմա» է եղել: «Հարիսի հացը լեղի է, ջուրը՝ աղի»: Հայկական պանդխտության սպեցիֆիկ հանգամանքն այն է, որ ժողովուրդը պանդխտության է գնացել ոչ բնության պատահարների և հողի անբերրության կամ այլ նման պատճառներով, այլ դաժան բռնակալական հարկերի, հալածանքների և այլ հարկադրական պայմաններից դրդված: Այլապես հայ ժողովուրդը անհուն սիրով կապված է եղել իր հողին և հայրենիքին:

Ընկ. Ղանալանյանը շատ ճիշտ է բացատրում ժողովրդի հայացքները աշխատանքի և խաղաղության մասին և, որ գլխավորն է, ինքնագիտակցությունը, որ ինքն է նյութական և մտավոր բարիքներ ստեղծողը: Եվ ճիշտ է մակարելում, որ աշխատանքի գոյությունն ու հարատևությունը պայմանավորված են խաղաղությամբ: «Աշխատանքը լեռներ կհավսրե» ասացվածքը աշխատանքի նշանակության ամենաճիշտ որոշումն է ժողովրդի կողմից:

Ժողովուրդը ճիշտ է գնահատել իր գոյության պաշտպանության ամուր հիմքը՝ իր աշխատունակությունը: «Բանուկ ձեռքը չի մուրա», «Աշխատողը անոթի չի մնա», «Ով դատի՝ նա կուտի»:

Դասակարգային թե՛ խուլ և թե՛ բացարձակ պայքարի մեջ ժողովուրդը, որքան էլ մեծ է եղել շահագործողների դիմադրությունը՝ ունեցել է միշտ իր անխորտակ հավատը. «Կապրի զրկվողը, չի ապրի ղրկողը»: «Ձի եղեր գիշեր, որ չի լուսցեր»:

Ժողովուրդը ունի նաև պայքարող ուժի և նրա գործադրման միջոցների ճիշտ պատկերացում: Եթե ճիշտ է գիտակցված հասարակական շարժումների մեջ առանձնացման անհուսույթությունը — «մի ձեռք ծափ չի տա», «մի ծաղկով գարուն չի գա», ապա նա գիտե, որ «Գեղ կանգնի՝ գերան կկոտրի», «մեճկ մեճկի վուր տանք, սար կու շուր տանք», «Ժողովուրդը

բնած առյուծ է, որ զարթնավ՝ էլ չի քնի», «աշխարհով եղած քանը վախ չունի»:

Առհասարակ ժողովուրդը մեծապես դիտակցում և գնահատում է հասարակական ուժը, նրա կենսալից էությունը — «ընկերովի մահը հարսանիք է», «էլի (հասարակության) հետ սեփորը Ջատիկ է», «կարպետում փաթաթվի՝ էլի հետ գնա»: Այսպես որոշ և վճռական է ժողովրդի գաղափարը հասարակության և նրա ուժի մասին:

Առաձենների նյութ է դառել հայ ժողովրդի աշխատասիրությունը: «Հայր ընչանք չբեղարի չի նստի»: Այս տեսակետից պետք է նշել, որ հեղինակը ճիշտ է նկատել, որ հայ առաձենների ու ասացվածքների ճնշող մասը աշխատավոր մարդու և նրա աշխատանքի վայրի, բնության՝ հողի, ջրի, ճամփայի, սարի, վարուցանքի և այլ նման նյութեր են: Այստեղ առկեն ուժեղ գույներով նկարվում են երկրի կազմը, կլիման, բուսականությունը, կենդանական աշխարհը և այլն:

Նշանակալից է, որ բերած բազմազան հայ առաձեններն ու ասացվածքները, որոնք արտացոլում են հայ ժողովրդի սոցիալ-տնտեսական կյանքը, կենցաղային սովորությունները, տնտեսական կարգերը և արյունակցական-ազգակցական ու ընտանեկան հարաբերությունները, նաև պարզում են մի բան. — կենցաղային սովորությունների և հայացքների մեծ կաշտունությունն ու տեղիությունը հին դարերից մինչև ընդհուպ 19-րդ դարի վերջերը և 20-րդի սկիզբները:

Արդեն մինչև իսկ, երբ դադարել են դոյություն ունենալուց հին հայացքների ու սովորությունների տնտեսական և սոցիալական հիմքերը, նոր հայացքները դժվար են մոռացնել տվել հինը: Դրա համար կարիք է եղել երկարատև, համառ պայքարի:

Նկատելի է մոր բարձր դիրքը բնության հասարակության մեջ: Նա է պահում մեծ բնատանիքը, նա սյունն է տան. մորից հետո հայրն է գրավում կարևոր տեղը: Մոտիկների արյունակցական անփոխարինելիությունից դուրս՝ նրանց արժեքը հասարակական մեծ նշանակություն ունի: Նրանք են տան, բնատանիքի կենտրոնացնող, պահող, կազմակերպող ուժը:

Տան մյուս անդամների խնդիրը որոշվում է ոչ այնքան հասարակական հիմնական նշանակությամբ, որքան ներքին, բնատանեկան փոքր շրջանակում: Ամենահիմնական և ամենակարևոր արժեքը հեղինակի տված ժողովրդի բնութագրությունն է, սրա վերաբերմունքը դեպի կրոնը և եկեղեցականությունը:

Ընկ. Ղանալանյանը այստեղ կանգնած է ժողովրդի ճանաչողության ճիշտ դիրքի վրա:



Նրա ուղեցույցը այս խնդրում լինինի ցուցմունքն է Ողորդալիզմն ու կրոնը՝ հեղինակավոր աշխատությունից՝ ուր ասված է. «Ով որ իր ամբողջ կյանքում աշխատում է ու կարիքի մեջ է, կրոնը նրան երկրային կյանքում հեղություն և համբերություն է ուսուցանում, մխիթարելով նրան երկնային հատուցման հույսով: Իսկ նրանց, ովքեր ուրիշի աշխատանքով են ապրում, կրոնը երկրային կյանքում քարեգործություն է ուսուցանում, առաջարկելով նրանց արդարանալու շատ էականագին միջոց՝ իրենց շահագործական ամբողջ գոյության համար, և երկնային քարեկեցության տոմսեր ծախելով ձեռնտու գնով:»<sup>1</sup> Որքերելով լինինի այս մտրակիչ դիտողությունը՝ հեղինակը բերում է այս մտքերի ապացույցը հայ ժողովրդական առածների ու ասացվածքների մեջ:

Ճիշտ պետք է համարել այն միտքը, որ ճաշխատավոր ժողովուրդը հետամնացության պատճառով ստիպված լինելով հավատալ զանազան շար ու բարի ոգիներին, սատանաներին ու հրեշտակներին, բախտին ու ճակատագրին, աստծուն ու սրբերին, միաժամանակ անխնայ կերպով մերկացրել, քննադատել ու ծաղրել է կրոնի պաշտոնական սպասավորներին երկրի վրա, հոգևոր դասի մեծ ու փոքր ներկայացուցիչներին, որոնք ապրել են նրա հետ կողք-կողքի և գործել նրա աչքի առաջ:

Այն ունիվերսալ, որ ձեռք է բերել ժողովուրդը՝ իր դարավոր կենսափորձից, հաղթահարում է բոլոր կազմակերպված ջանքերը, որ գործ է դրել եկեղեցին մթաթնելու ժողովրդի գիտակցությունը: Այդ բոլոր փորձերը մասսաների գիտակցության դեմ որքան էլ համառ ու մեթոդիկ են եղել, այնուամենայնիվ չեն կարողացել մյուս կողմից թաքցնել եկեղեցական դասակարգի բուն էությունը ժողովրդի աչքից: Որքան էլ տարերային է եղել ժողովրդի դիմադրական պրոցեսը, թերևս ոչ միշտ է արտահայտվել բացարձակ դիմադրության զանազան ձևերով, բայց միշտ անխախտ է պահել նրա սպողիցիոն վերաբերմունքը դեպի եկեղեցականությունը: Ժողովուրդը միշտ տեսել է եկեղեցական «հայրերի» և ունեւոր դասակարգի համերաշխությունը շահագործման պրոցեսի մեջ և միշտ գնահատել է հնազանդության ու հպատակության բարոզը իբրև իշխող դասակարգերի կողմից ինքնապաշտպանության և հեղինակավորության միջոց՝ ընդդեմ ժողովրդի: Ինչ էլ որ լինի, ժողովուրդը իր բացասական վերաբերմունքը դեպի եկեղեցական դասը միշտ ցույց է տվել բազմազան միջոցներով: Նրա ժխտողական

դիրքը հանդեպ եկեղեցական ծեսերի ու արարողությունների արտահայտվել է հայկական վաղ միջնադարում, աղանդավորների գաղափարախոսության միջոցով և այդ գաղափարական պայքարի ուժեղ արձագանքները մենք գտնում ենք հայ քանահյուսության զանազան ժանրերի մեջ (առակ, էպոս, երգ և այլն), իսկ ամենից ուժեղ դրանք կան հայկական առածների ու ասացվածքների մեջ: Հայկական առածների ու ասացվածքների մեջ մերկացված հոգևորականությունը նկարագրվում է իբրև մի անաշխատ և շահագործող դաս: Այնպիսի անողոր ու պարզ արտահայտություններ, ինչպիսիք են՝ «Տերտերի ասմունքը միշտ է՝ ուղմունքը», «Տերտերն առնելուն ղոշաղ ա, տալուն՝ նաչաղ», «Եւար ու ձոր, տերտերի փոր» — պարզ բնութագրում են թե՛ տերտերի ազահությունն ու ձրիակերությունը և թե՛ ժողովրդի համարձակ ձևակերպումը, որի մեջ նա հանդես է գալիս թե՛ իբրև գիտակցող և թե՛ անգամ ծաղրի ենթարկող միտք:

Ռեալ իրականության մեջ կրոնի ներկայացուցիչներին լավ ճանաչելով, ժողովուրդը կարողանում է իրերի բնական տրամաբանությամբ կազմել իր տարերային մատերիալիստական աշխարհայացքը կրոնի խնդիրներում:

Հայ ժողովուրդն ունի բավական թվով աթեիստական ստեղծագործություններ՝ ուղղված աստծու և սրբերի դեմ: Ըր բարձրագույն փիլիսոփայության և իդեոլոգիական հարցերում նա կարողացել է աստծու պատկերի մեջ տեսնել «երկնային թագավորին», «երկնային կալվածատերին», «երկնային աղային», իրեն ծանոթ ֆիգուրային: «Վերը աստված, վարը՝ թագավորը», «Վերն իրիշկեմ (նայեմ) աստված ի, ցածր՝ ամիրեն»: Այս զուգադրությունները շատ են պարզ, որ բացատրելու կարիք լինի: Եկեղեցականության և աշխարհիկ իշխանությունների «դաշինքը» ընդդեմ ժողովրդի, նրանց ճնշումները տնտեսական և մտավոր կյանքում հրաշալի դպրոց են հանդիսանում ժողովրդի հայացքների, կրոնական պատկերացումների ոչ վերացական, այլ իրական կոնկրետացման:

Ժողովուրդը շատ որոշակի և ցայտուն ձևակերպությամբ իր «վերացումների» մեջ ուժեղ գույներով նկարում է և ցույց տալիս իր հասկացած աստծու ծննդաբանության, ծագման աղբյուրները:

Այսպիսով, հենց միայն առածներին ու ասացվածքներին հետևելով, կարելի է կատարյալ գաղափար կազմել ժողովրդի վերաբերմունքի մասին աստծու գաղափարի նկատմամբ և տեսնել նրա դասակարգային առողջ և ուժեղ բնագործը:

<sup>1</sup> Վ. Ի. Լեւին, Երկեր, հատ. 10, Երևան, 1949 թ., էջ 93:



Այսպիսով, եթե մի կողմից ժողովուրդը ենթարկվում է իշխող հոգևորականության փառափարախոսության և տալիս է մթագնած հայացքների այսպիսի նմուշներ՝ «Քյասիբի (աղբատի) տերն աստված է», «Աստված մեկ է, ողորմությունը՝ հազար», «Ամեն հայալ (արդար) մարդ արքայությունից բաժին ունի» և սրանց նման առածների փաստեր, սա ցույց է տալիս կողմնակի ձեռքի ներկայությունը և չի բացառվում նաև տառապած ժողովրդի մասը տրամադրությունների արդյունքը, սակայն նույն ժողովուրդն է, որ տալիս է այդ առածներին հակառակ իմաստներ պարունակող ասացվածքներ, «Աստված հարստի դհիցն (կողմ) առ թուլլերի ու կարիքավորների նկատմամբ աստծու անբարյացակամ վերաբերմունքն է արտահայտում թե՛ վերոհիշյալը և թե՛ հետևյալը. «Որքը րսաց՝ ես կխնդամ, աստված առաց՝ հըպը ես ուրտեղ եմ»։ Կամ՝ «Աստծու գովքը միշտ հարուստն է էրեք (արեւ)»։ «Անաստված տեղը կաց, անարխա (անապահով) տեղը մի մնա»։

Ընկ. Ղանալանյանի մեկնաբանությունների մի դրական կողմն էլ այն է, որ նա կարողացել է ձգտել և գտնել ժողովրդի պայքարող ակտիվ հոգիին նրա առածների ու ասացվածքների մեջ և ճիշտ բնորոշել նրա «հավատքն էլ», «անհավատությունն էլ»։

Այս խուլ պայքարի մեջ, որ տեղի է երկար դարեր, նայելով նրա առածներին ու ասացվածքներին՝ ժողովուրդը որքան էլ ենթարկվել է, երբեմն կորցրել է զգաստությունը, երբեմն ուժ չի ունեցել դուրս գալու խավարից, այնուամենայնիվ ընդհանուր առմամբ կարողացել է պահպանել իր առողջ բնազդը։ Նրա բնազատական միտքը, հայացքները միշտ ելակետ են ունեցել ունի իրականության փորձը, կոնկրետ մարդկային, հասարակական հարաբերությունները և երբեք ձգտում չեն ցույց տվել վերացականության, սպեկուլյատիվ մտածողության։

Սա է ընկ. Ղանալանյանի ուսումնասիրության խոշոր արժեքը։

Միայն հարկ կա վերադառնալ ժողովրդական առածների ու ասացվածքների գնահատության մեջ մի կողմի ոչ բավարար հետազոտությանը։ Անշուշտ, ժողովրդին անկրոն և անհավատ պատկերացնելը հակապատմական է, և ընկ. Ղանալանյանը այդ բանը չի ժխտում։ Սակայն նշելով ժողովրդի կասկածամիտ, թերահավատ, երկբա վերաբերմունքը և առհասարակ ոչ բավարար հարգանք տածելը դեպի կրոնը, որ ճիշտ է, չի անդրադառնում մի դրժվար նկատելի առանձնահատկության՝ ժողովրդի հավատքի խնդրում։ Ժողովուրդը, երբեմն

բեմն օժտում է աստծուն «արդարադատության», «բարեգթության», «ամենաողորմածության» լուսապսակով, որպեսզի արտահայտի իր իսկական պատկերացումը թե ինչպես պիտի լինի արդարադատությունը, բարեգթությունը և ամենաողորմածությունը, որպեսզի դրան անհամապատասխան, կոնտրաստ դիրքերի վրա կանգնած աստծուն դիմի և բռնելով նրան կողմնապահության մեջ՝ ծաղրի և նվաստության ենթարկի արժանազուրկ անելով նրան։ «Ախ և ցախ» իբր պատահական հանգավորումով է աստծուն կոչում ցախ. «Ախ, աստված, որին կուտաս սելով փետ, որին չես տա ցախ՝ աստված»։

«Աշխարհ զոռքինն է» ասացվածքը միանգամայն լուրջ և անայլաբան տեսք ունի։ Կարելի է իրենք ընդունել դա իբրև ժողովրդի աշխարհայացք։ Սակայն մենք շատ լավ գիտենք, որ ժողովուրդը այդտեղ իրոնիա է գործածում։

Որքան էլ ժողովրդական առածներին և ասացվածքներին խառնված լինեն նրա համար խորթ տարրեր, որ նախ չնշելու չափ աննշան են, որքան էլ ժողովուրդն իր սոցիալ-պատմական կյանքի որոշ մոմենտներին թեկուզ և ենթարկվել է մտքի մթագնման և արտահայտել է իրեն ոչ վայել մտքեր, կամ տուրք է տվել կրոնական ազդեցության, այնուամենայնիվ իր հիմքում տիրականն ու կայունը եղել է նրա հոգու վեհությունը, բարձր հատկությունը, արթուն խիղճը, հուսացող սիրտը և հավատը իր ուժի և ճնշողների դեմ տանելիք իր վերջնական հաղթության, նա դիտակցել է, որ այդ ուժը իր մեջ կա։

Ընկ. Ղանալանյանը իր «Առաջաբանում» խոսում է ներկա ժողովածուի հետ կապված հանգամանքների մասին, նշում է հայկական առածների գրառման և հետազոտման մասին անցյալում, ժողովածուի աղբյուրների, առածների դասավորման եղանակի, դրանց թեմատիկ խմբավորման և վարիանտների մասին։

Իրավացի է հեղինակը, որ անցյալում մեր բանահավաքները չեն զբաղվել առածների ուսումնասիրությամբ։ Մենք կարծում ենք, որ սխալմատիզացիայի և մեթոդոլոգիայի տեսակետից մեծ օգնություն էլ չէին կարող տալ հին բանահավաքներն իրենց ուսումնասիրությամբ, թեև գործի նկարագրական մասում նրանք կարող էին շատ կարևոր տեղեկանքներ տալ և առհասարակ հավաքման պրոցեսի տեխնիկական բացատրությունը կարող էր օժանդակել սովետական ուսումնասիրողին։

Աղբյուրները հայտնի են և բավական շատ են. բանակի խնդրում ժլատ չեն եղել անցյալի բանահավաքները։ Բանահավաքների թվում նշված են շատ հեղինակավոր պրոզաներ, որոնց



ժողովրդական գրականությունը հայտնի է և վկայում է նյութի որակի մասին: (Արուստյան, Պողոսյան, Աղայան, Սունդուկյան, Զուրաբյան, Ազապյան և այլն):

Հեղինակը նշում է և վատորակ աղբյուրներ, որոնցից հեռու է պահել ժողովածուն: «Իրանը ժողովրդական», «Ուսման կամ «ազգային» անվան տակ հավաքված, խմբագրած, սարքած առաջնորդ են: Հեղինակն ասում է, որ այդպիսի նյութերի նկատմամբ ցուցաբերել է «խիստ քննադատական մոտեցում»:

Սա անհրաժեշտ էր ու անխուսափելի և հեղինակը բավական գործ կատարել է այս բանում:

Մի բանի խոսք առածի և ասացվածքի բնագրի մասին: Առաջը իդեալի և գեղարվեստական ձևի ստեղծագործական միություն է: Նրա յակոնիկ ծավալը շատ խաբուսիկ է, և այդ պատճառով դրանց արժեքավորման խնդրում սխալներ շատ են կատարել հավաքողները: Ժողովրդական նյութերի հավաքման գործում այս հանգամանքը ծառայել է ի վնաս առածի ճշգրիտ դատման: Մեր անցյալի գրողները և ամենից հենց, ճիշտ է, այն բախտն են ունեցել, որ յսել են ճշգրիտ առածը և հավերժացրել, որով և հետագա բանահավաքի և ուսումնասիրողի համար կատարել են անգնահատելի լավ գործ: Սակայն հետզհետե, գալով դեպի նոր ժամանակները՝ առաջներն ու ասացվածքները ենթարկվել են փոփոխությունների, որ ընթացել են ոչ զարգացման և կատարելագործման, այլ աղավաղման և փչացման կորագծով: Հնադույն բանահավաքի գործը ուրեմն շատ ավելի դյուրին է եղել, քան հետնագույններին: Առաջինները փրկել են քնագիրը: Ի միջի այլոց նշենք, որ բնագրի պրոբլեմում կա մի հանգամանք, որ պետք է աչքի առաջ ունենալ: Հարց է առաջ գալիս, արդյո՞ք պատրաստի է աշխարհ գալիս առաջնի վերջնական ձևով և ապրում անփոփոխ ու կայուն կյանքով: Կարծում ենք, որ դա ապրում է շատ պրոցեսներ: Երբեմն մի միտք, իդեա ձևավորվում է իբրև պատրաստի ձևավորված ամբողջություն, երբեմն ապրում է զարգացման, կատարելագործման որոշ շրջան և հասնում է վերջնական աստիճանի, երբեմն էլ ենթարկվում է այլափոխումների, այլանդակումների և փչանում է, նայած թե ինչ ազդեցությունների է ենթարկվում պատրաստի կամ պատրաստվող նյութը: Բայց ինչ որ է՝ առածի կլասիկ քնագիրը, որ պահում է իր սկզբնական իմաստի և ձևի կայունությունը, որը և նրա ճշգրտությունն է, շատ է կարևոր ներկա ուսումնասիրության խնդրի համար:

Առածի նյութն ու ձևը շատ է հանրաժանոթ, որ կարևոր լինել խոսել այդ մասին, սակայն պետք է հիշեցնենք, որ առածի սպեցիֆիկումի ճշգ-

գրությունը կարող է մեզ, ինչպես և բանահավաքին և ուսումնասիրողին միջոց ծառայել ընտրելու, գտնելու, վերականգնելու առածի բնագիրը, եթե այն աղավաղված է և հաճախ առածի ճանաչելը օգնում է գտնելու սխալներ այնտեղ, ուր այդ բոլորովին չես կասկածում: Իսկ սա կարևոր է հիշեցնել... Առաջն ունի իր տրամաբանությունը, մտքերի հակադրությունը, կերպարների սիմետրիան, տաղաչափությունը, տակտը, ռիթմը և հանգը: Դա մի բյուրեղային ամբողջացում է, որի մասերը ներդաշնակորեն կապված են իրար հետ և թույլ չեն տալիս խախտելու ոչ մի հնչյուն: Կլասիկ առածը կուռ ձուլվածք է, յուզելիության գործ:

Եվ եթե բանահավաքին չեն հետաքրքրում առածի այս խստորոշ պահանջները, նրանք ուսումնասիրողին զրկում են ոչ թե առածի թզուղարվեստական կողմի վայելքից, որ մեծ «ցավ» չէ անշուշտ, այլ նրանք ուսումնասիրողին ուղղակի սխալների մեջ են գցում առածի իմաստների խնդրում: Խստորեն ասած՝ ժողովուրդը առածի մեջ ձգտում է բյուրեղային պարզության մեջ խտացնելով միտքը, նրան այնպես զինել ձևի նպատակահարմարությամբ, որ ուղիղ հնչվի, մասերը թվայր շրնկեն, չաղավաղվեն և դյուրությամբ հիշվեն, դիմանան, անկարելի լինի մոռանալ: Իդեալական ապահովագրում:

Ճիշտ է բոնում հեղինակը Տրդատ Պալյանի անշուրհը խմբագրումը: Մար ու ձոր փխտերտերի փորձ: Խանգարված է տակուր: Այդ էլ բավական է մերժելու համար փխտաբանի ավելորդությունը, երբեմն վնասում է, այլափոխում հանգը:— Մեր բանաստեղծը օգտագործում է այսպես. «Դարձել է աշխարհ, ախպեր, առ ու փախ, «Սերը՝ դարձել սուր ու ջուրը՝ արին: Սիրո սիմետրիկական զուգակշիռը այստեղ դառել է ջուրը, որով ստացվում է, որ սերը սուր է դառել: սա ճիշտ է. լավ բանը վատ բան է դառել: Դրան հետևում է առածի մյուս զուգակշիռը և այնտեղ էլ՝ ըստ առածի տրամադրության և տրամաբանության՝ պետք է մի լավ բան վատ բան դառնա: Զուրը դառել է արյուն— սակայն ի՞նչ վատ բան է ջուրը, որ դառել է վատ բան՝ արյուն (հեղինակի որակմամբ): Պարզապես բանաստեղծին անհայտ է եղել իսկական բնագիրը:— Սերը սուր ա դառել, արինը՝ ջուր: Այսինքն արյունն էլ (թանկագին բանը) ջրի պես առատ հոսող, թափվող բան է դառել: Այս եզրակացությունը շրնդունողը պետք է պատկերացնի գործը այսպես: Զուրը դառել է արյուն, ուրեմն... առատ հոսում է, թափվում արյան պես: Պարզ է բանաստեղծի ընտրած ձևի անհաջող լինելը: Իսկ մեր բերած ուղղումի



մեջ և՛ տրամաբանություն կա, և՛ ուրիշ, և տակտ:

Ընդունենք, սակայն, որ այս օրինակում ըստացված մտքի աղավաղումը շատ էլ մեծ չի: Բայց ահա սույն ուսումնասիրության տեքստի մեջ հանդիպում ենք մի այսպիսի առածի:

«Գեղը չկա տանտիկին, իշուն անունը դրել են լուստիկին»: Հարցն այստեղ առաջ է դալիս այն կարիքից, որ պիտի ունենար գյուղը տանտիկնոջ մեջ: Գյուղն այդ կարիքը չունի: Դրա կարիքն ունի տունը: Եվ մի այլ առածում արդեն այդպես էլ ասվում է. «Տունը չկա տանտիկին»: Բացի այդ, առաջին առածը անշնորհ է կազմված. «Անունը դրել են», մինչդեռ երկրորդը՝ «Տունը չկա տանտիկին, հորթին կըսեն լուստիկին» և տրամաբանական է և լինելով նաև տաղաչափականորեն և տակտով ճիշտ՝ միակ վավերականն է:

Վավերական բնագրի վերականգնման կարևորությունը դառնում է առաջնակարգ մասնավանդ նյութի այնպիսի ընտրության գործում, ուր դրա քաղաքական-սոցիալական արժեքի խնդիրն է ծագում: Հիշեցնենք թեկուզ կրկին վերևը բերված մի ասացվածքի օրինակը. — «Ախ, աստված, մեկին կուտաս սելով փետ, մեկին չես տա ցախ, աստված»:

Բավական է, որ այս ասացվածքը ուսումնասիրողի ձեռք հասնելից աղավաղված ձևով, թեկուզ շարադասությունը միայն փոխած. օրինակ՝ «Ախ, աստված, որին փետ կուտաս, որին ցախ էլ չես տալիս»: Սա կհամարվեր ստրկական վախկոտ գանգատ ուղղված աստծուն, մինչ վավերական բնագրում արհամարհական ծաղր է աստծու դեմ:

Ահա թե ինչու մենք վստահ ենք, որ քավական է լավ թափանցել առածի, ասացվածքի տեղեկանքի մեջ և չէր խանգարի ճիշտ ինտոնացիայով արտասանել դրանք, որ հասկացվի և զգացվի դրանց իրոնիկ տրամադրությունը:

Մենք չենք կամենում ծանրաբեռնել հոգվածք բնագրերի ստուգման օրինակներով: Բերած օրինակների նպատակն այն էր, որ ցույց տալինք անաղափար բնագրի կառուցմանը, որովհետև միայն դրա վրա կարող է հենվել ուղիղ գիտական ուսումնասիրություն: Եվ եթե վավերական բնագրի կարևորությունը մեծ է մի սոցիոլոգի, պատմաբանի, լեզվաբանի, ազգագրագետի, քաղաքական գործչի համար, պակաս կարևոր չէ լեզվի, ոճի և գեղարվեստական շատ խնդիրների համար վավերական բնագրերը: Պետք է վճռականորեն հայտարարենք, որ մեր գրական լեզվի ֆեռականության համար առածներն ու ասացվածքները առաջնակարգ կարևորություն են ներկայացնում: Մասնավորապես պետք է նշենք, որ առածի ու ասացվածքի

մեջ է, որ խոսքը խտանում, պարզվում, հրդեհվում, սրվում և զինված հանդես է գալիս ժողովրդի լեզվի մեջ և, ոչ միայն իր գոյությունը պահում, այլև ազդում լեզվի դարգացման վրա: Հայ լեզվի մի առանձնահատկությունը՝ բարդությունների հարմարությունը, որ մյուս կողմից էլ նրա ծանրացման պատճառ է՝ առածների ու ասացվածքների շնորհիվ կարող է մեծապես չափավորվել: Առածն ու ասացվածքը համարյա միշտ սղում են բառը, դեն են գցում բարդության ավելորդ բեռը և պահում են բառարմատը: Առածների ու ասացվածքների ուսումնասիրությունը լեզվի մշակման տեսակետից հրաշալի դպրոց է: Խոսքն, անշուշտ, կլասիկ, ընտիր բնագիր առածի ու ասացվածքի մասին է և ոչ այն խանգարված, ձեռք կորցրածների մասին, որ առաջացել են ժողովրդի մեջ ոչ վարպետ խոսողների, անփույթ կամ անճաշակ հավաքողների մեղքով: Հասկանալի է, որ ընկ. Ղանալանյանը չէր կարող թույլ տալ իրեն խմբագրել իր աշխատության տեքստը: Բնագրերի վերականգնման, մշակման խնդիրը վերաբերում է այլ կարգի աշխատություններին:

Հասկանալի է նաև, որ ընկ. Ղանալանյանը իրեն իրավունք չի վերապահել վավերական բնագրերը ստուգելու և ուղղելու նա միայն կրկնակ և բազմակ օրինակները իրար մոտ է դրել, և բնագիր որոնողը կարող է ընտրել դրանցից մեկը կամ մյուսը:

Առաջին նվազ գիտական մեթոդն ու մոտիցումը իհարկե այդ է: Սակայն ինչպես վերևում նշեցինք՝ բնագրի վավերականության մեծ նշանակությունը, այս աշխատանքը մնում է հետագա պարտք ընկ. Ղանալանյանի կամ այլ ուսումնասիրողների առաջ: Այս ասում ենք այն պատճառով, որ ժողովածուն կազմվելով ընկ. Ղանալանյանի ընդունած մեթոդով, ուր նյութերի դասավորությունը հետապնդում է սոցիալական արժեքը վեր հանելու նպատակին, չէր կարող ձեռ տալ հավաքողների և այլ աղբյուրների «արձանագրություններին»:

«Ներածություն» և «Առաջարանի» նյութը մեծապես նպաստում է առածներից և ասացվածքներից օգտվելիս ճիշտ ղեկավարվել մեթոդի և տեսակավորման, ընտրության խնդիրներում: Ամենակարևորը՝ մեթոդի խնդիրը հեղինակը լուծել է միանգամայն ճիշտ՝ մերժելով նյութի դասավորումը ըստ առակների հասկացողությունների (մարդ, աշխարհ, բնություն, խելք, խիղճ, խոսք և այլն): Կամ՝ առարկայական անվանական մեթոդը, կամ՝ միևնույն թեմային վերաբերող առածների ցրումը տարբեր տեղերում, տարբեր անունների տակ (խելք-իմաստուն-գիտուն, ժողովուրդ-խալխ-առյաթ-համայնք և այլն): Դրանց մեջ ամբողջական, ցայ-



տուն կերպով չէր պարզարանվի առածների ու ասացվածքների սոցիալական բովանդակությունը: Այն ենթաբաժանումները, որ տվել է հեղինակը, պետք է համարել ամենանպատակահարմարը. 1) սոցիալ-տնտեսական և իրավա-քաղաքական հարաբերություններ և հասկացողություններ, 2) կենցաղային երևույթներ, հարաբերություններ ու հասկացողություններ, 3) մարդկային-հասարակական հատկություններ, բնավորություն և խառնվածք, 4) բարոյական հասկացողություններ, կենսափորձից եզրակացություններ և խրատ:

Այս ենթաբաժիններն իրենց ավելի մանր ենթաբաժիններով, ճիշտ է, թվում է թե մտցնում են որոշ սխեմատիզմ, բայց իրոք օգնում են ուսումնասիրողին՝ խմբավորելով խորանալ տառածների բովանդակության մեջ և ընդհանրացումներ անել պատմական, սոցիալական, իդեոլոգիական և այլ կարգի իմաստներով: Ճիշտ է, և այս դիտողությունն անում է նաև հեղինակը, որ այս երանգավորումները երբեմն էլ նպատակին կարող են չհասցնել նյութի տարտամության կամ բազմանշանակության պատճառով:

Համեմայն դեպս այս բաժանումները առաջին, անհրաժեշտ և դժվարին մասն է այս գործում, որ հեղինակից հետո ուսումնասիրողներին մեծ հարմարություն կտա:

Ընկ. Ղանալանյանը հատուկ գլուխ է նվիրել հարևան ժողովուրդների հետ ընդհանուր և փոխառած առածներին: Այստեղ ցուցակը բավական լայն է, ուսուների, ուկրաինացիների, վրացիների, ադրբեջանցիների, ուզբեկների, տաջիկների և այլ ազգությունների անմիջական հարևանության և իրենց երկրներում շփման հետևանքով: Դրանք բավական թիվ են կազմում: «Մինչև կալծակը չխփի, մուծիկը երեսը չի խաչակնքի».— սրան է համապատասխանում հայկական «մինչև ամպը չգոռա՝ աստվածաստված չեն ասի»: Այսպես և մյուսները:

Ճիշտ է նկատում հեղինակը, որ «նմանություններն ու ընդհանրությունները աշխատավորական խավերի կյանքի ընդհանուր պայմաններով կամ այդ պայմանների մեջ եղած ընդհանրություններով» կարելի է բացատրել Այնպես որ ազդեցության և փոխազդեցության պրոբլեմի մեջ հեղինակը բավական զգուշավոր

է և բերում է հաստատուն փաստեր ընդհանրությունների, որ ոչ մի կապի հետևանք չեն, այլ զուգադիպություն:

Հետաքրքրական են սովետական շրջանի առածների նմուշները, որ բերել է ընկ. Ղանալանյանը գրքի ներածության մեջ՝ դրանց առաջացման շատ կարևոր բացատրությամբ, որ բացի իր քաղաքական նշանակությունը՝ ուշագրավ է նաև այլ տեսակետներով: Այդ նմուշները ցույց են տալիս, որ մեր ժողովուրդը սովետական շրջանում ևս կարիք է զգում առածների ու ասացվածքների, որով և բացատրվում է ֆուլկլորային այս ժանրի կենսունակությունը և ցույց է տալիս, որ դա կշարունակվի նաև այսուհետև: Եվ ապա առածների ու ասացվածքների առաջացման խնդրում պարզվում է մի հանգամանք, որ առածները փոխում են իրենց տեքստային տարրերը և հարմարվում են նորանոր ժամանակների քաղաքական-սոցիալական պայմաններին: Օրինակ՝ «Թագավորը թախտից ընկավ, կուլակը՝ բախտից»: «Ազոավի խնամին կաշաղակը կլինի, կուլակինը՝ տերտերը»: «Լոդրի համար շաքաթվա օխտը օրն էլ կիրակի է»: «Աշխօրն աշխատողին տուր, մինն էլ ավելի» և այլն: Սրանք հանրահայտ հին առածներ են՝ «Թամբալի համար շաքաթվա օխտը օրն էլ կիրակի է», «Հացը հացարարին տուր, մինն էլ ավելի» և այլն:

\* \* \*

Ընկ. Ա. Ղանալանյանը իր այս աշխատությանը կատարել է շատ կարևոր գործ: Նա տվել է հայ ժողովրդի մտքի, հանճարի, հոգեկան և ֆիզիկական ուժի, հասարակական ուժեղ բնազդի պատմությունը, նրա դասակարգային պայքարի, շինարար գործի պատմությունը:

Եվ եթե վերջիվերջո ամենաարժեքավորն ու շահեկանը մի ժողովրդի ճանաչողությունն է նրա ամբողջական պատմական ասպեկտում և ոչ միայն մասնական, էպիզոդիկ մոմենտների արտահայտություններում, ընկ. Ղանալանյանը իր հերոսին, հայ ժողովրդին դնելով առածների և ասացվածքների շքեղ ֆոնի մեջ, տվել է նրա հոյակապ պատկերը: Բոլոր՝ բազմադրյուն և մեծարժեք գործ:

Գ. ԴԵՄԻՐՃՅԱՆ